Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 05.04.2021թ. թիվ 2112500502 որոշումն անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման թողնելու մասին

<<16>> 04 2021թ. 7-13- 6252 ք.Երևան

Ճանապարհային ոստիկանության պետ, ոստիկանության գնդապետ Ե.Կարապետյանս, վերանայելով Արսեն Թավաքալյանի ՄԴ/30992-21 դիմումի քննարկման արդյունքում ստեղծված նյութերը՝

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի Զ.Անդրանիկի փողոցի 22 շենքի 29 բնակարանի բնակիչ Արսեն Թավաքալյանը դիմումով իր անհամաձայնությունն է հայտնել Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 05.04.2021թ. թիվ 2112500502 որոշմանը՝ նշելով, որ կայանել է երկրորդ շարքում 57 վայրկյան տևողությամբ:

Դիմումի քննարկման արդյունքում պարզվել է, որ թիվ 2112500502 որոշումն ենթակա է կատարման հետևյալ պատճառաբանությամբ.

<<Տեսանկարահանող և լուսանկարահանող սարքերով հայտնաբերված ճանապարհային երթևեկության կանոնների խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունների մասին>> օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական վարույթի իրավախախտման հատկանիշների պարզման փուլում իրավախախտումը հիմնավորող ապացույցը իրավախախտումն ամրագրած տեսանյութն է կամ լուսանկարը, որը պարունակում է նաև տեխնիկական միջոցով արձանագրված տվյալները:

ՀՀ կառավարության <<Ճանապարհային երթևեկության կանոնները և տրանսպորտային միջոցների շահագործումն արգելող անսարքությունների ու պայմանների ցանկը սահմանելու մասին>> 28.06.2007թ. թիվ 955-Ն որոշման 80-րդ կետի համաձայն՝ տրանսպորտային միջոցը տեղակայել թույլատրվում է երթևեկելի մասի եզրին զուգահեռ մեկ շարքով՝ բացառությամբ այն տեղերի /երթևեկելի մասի տեղային լայնացում/, որտեղ գծանշմամբ թույլատրված են տրանսպորտային միջոցների դասավորման այլ ձևեր:

Իրավախախտումն ամրագրած տեսանյութը փաստում է, որ դիմումատուի տրանսպորտային միջոցը տեղակայված է երթևեկելի մասի երկրորդ շարքում:

Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 05.04.2021թ. թիվ 2112500502 որոշմամբ ամրագրված իրավախախտումն արձանագրած տեսանյութի լրացուցիչ ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ իրավախախտման փաստը Երևան քաղաքի Թումանյան-Սարյան փողոցների խաչմերուկի հատվածում սկսվում է արձանագրվել 18:00:03-րդ վայրկյանից և դադարում 18:01:23-րդ վայրկյանին՝ տևելով 80 վայրկյան, իսկ <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 39-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 21-րդ և 25-րդ մասերով (միայն կանգառ կատարելու մասով) նախատեսված վարչական իրավախախտումն ունի նվազ նշանակություն այն դեպքում, երբ կանգառը կատարվել է **միայն ուղևորների նստելու կամ իջնելու նպատակով, չի գերազանցել մեկ րոպե ժամանակահատվածը, և դրա հետևանքով երթևեկության մյուս մասնակիցների համար խոչընդոտ կամ վթարային իրադրություն առաջացնելու ակնհայտ վտանգ չի ստեղծվել,** հետևաբար առկա չէ իրավական որևէ հիմք դիմումատուի արարքը նվազ նշանակություն ունեցող գնահատելու համար:

Տեսանյութը փաստում է, որ կանգառը չի կատարվել միայն ուղևոր նստելու նպատակով, այլ գերազանցվել է **սահմանված մեկ րոպե** ժամանակահատվածը և խոչընդոտ հանդիսացել երթևեկության մյուս մասնակիցների համար, ուստի իրավախախտումը նվազ նշանակություն ունենալ չի կարող:

Ինչ վերաբրում է դիմումատուի նշած կանգառի տևողությունը 57 վայրկյանը չգերազանցելուն, ապա դա ոչ թե վարչական իրավախախտման տևողությունն է, այլ այդ փաստն արտացոլող տեսանյութի տևողությունն է:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 124-րդ հոդվածի 21-րդ մասի համաձայն տրանսպորտային միջոցների վարորդների կողմից կանգառի և (կամ) կայանման կանոնները խախտելը՝առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հնգապատիկի չափով, տուգանային միավորի կիրառում՝ 0.5 միավոր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 293-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ճանապարհային ոստիկանության վարչական տույժ նշանակելու մասին 05.04.2021թ. թիվ 2112500502 որոշումը թողնել անփոփոխ, իսկ վարչական բողոքն առանց բավարարման:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հանձնելու օրվան հաջորդող օրը և կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:
3. Սույն որոշման օրինակն ուղարկել Արսեն Թավաքալյանին:

Ե.Կարապետյան

կատարող՝ Ա.Ղափլանյան
հեռ. 011 544 783